Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ՓՎ/15-2023

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄՈՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ՝ ԺԱՄԸ 16.00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Տ. Խաչատրյան	ՀՀ փոխվարչապետ
Ռ. Գևորգյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Գ. Ավսալկացի	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հայաստանյան ներկայացուցչության ղեկավար
Լ. Օհանեսյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն
Լ. Մնացականյան	«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
Ա. Սալաթյան	«Ինժեներական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Գ. Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Վ. Ուռուտյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Ս. Ասատրյանց	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Ա. Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
Հ. Ֆանյան	«Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
Հ. Չոբանյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն

Ս. Գրիգորյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Կ. Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Է. Ղազարյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն

Խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակիցներ

Ջ. Գալագեր	Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան
Հ. Խաչատրյան	ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Հ. Կարապետյան	ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ
Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ռ. Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Մանուկյան	ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Աղիլխանյան	ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի ղեկավար
Ա. Գասպարյան	ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական
Լ. Առաքելյան	ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական
Ժ. Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Լ. Հակոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ
Հ. Հովհաննեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ
Լ. Սարգսյան	Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության ներկայացուցիչ
Հ. Պատվականյան	ՎԶԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար

Հ. Մալխասյան	ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
Դ. Աղաջանյան	ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
Ռ. Սարուխանյան	ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ
Հ. Սողոմոնյան	ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի հանրային կապերի պատասխանատու
Վ. Կամարյան	ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող

1. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի տասնութերորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման վերաբերյալ

(Հովսեփ Պատվականյան, Հայկ Կարապետյան, Ռաֆայել Գևորգյան, Տիգրան Խաչատրյան)

1) Ընդունել ի գիտություն ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի զեկույցը՝ նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման և ընթացիկ աշխատանքների, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի № 1224-Լ որոշմամբ հաստատված բարձր որակավորում ունեցող աշխատողների ներգրավան միջոցառման, ոչ ակտիվ հարկատու կազմակերպությունների՝ պարզեցված կարգով լուծարման կարգավորումների, ինչպես նաև առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների պարբերաբար չկատարումը կանխարգելող կարգավորումների վերաբերյալ:
2) ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հետ համատեղ երկամսյա ժամկետում ամփոփել և շահագրգիռ պետական մարմինների կարծիքին ներկայացնել առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների պարբերաբար չկատարման կանոնակարգմանն ուղղված փաթեթը:

2. Հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրման վերաբերյալ

(Հովսեփ Պատվականյան, Լուսինե Մնացականյան, Ռուբեն Սարգսյան, Ռաֆայել Գևորգյան, Տիգրան Խաչատրյան)

1) Ընդունել ի գիտություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանի և «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Լուսինե Մնացականյանի զեկույցը՝ հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ:
2) Ընդունել ի գիտություն Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանի դիրքորոշումն առ այն, որ հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի օրենսդրական կարգավորումների փաթեթի մեջ անհրաժեշտ է հստակ տարբերակել «հեռավար աշխատանք» և «գործուղում» հասկացությունները, ինչպես նաև հստակեցնել հեռավար աշխատող օտարերկրյա քաղաքացիների՝ աշխատանքի թույլտվության անհրաժեշտությունը կամ դրա բացակայությունը, ինչպես նաև հանրային ծառայության համարանիշ կամ դրա բացակայության մասին տեղեկանք ներկայացնելու պահանջի կիրառելիությունը:
3) Ընդունել ի գիտություն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր Վարդան Ուռուտյանի նկատառումն առ այն, որ հեռավար աշխատանքի կարգավորումների ներդրումը էական նշանակություն ունի նաև որակյալ բուհական միջավայրի և ակադեմիական հանրույթի բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից:
4) Ընդունել ի գիտություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանի ներկայացրած տեղեկատվությունն առ այն, որ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և ԱԺ գլխադասային հանձնաժողովի և Արդարադատության նախարարության հետ համաձայնեցնելուց հետո կներկայացվի Կառավարության քննարկմանը:

5) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանին՝
   1) Երկշաբաթյա ժամկետում քննարկել նախագծի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դիտարկումները և նախագիծը սահմանված կարգով ներկայացնել Կառավարության քննարկմանը,
   2) Մշակել սույն կարգավորումների ուժի մեջ մտնելուց հետո դրանց՝ պետական կառավարման մարմինների կողմից կիրառելիության վերաբերյալ ուղեցույց՝ սահմանված կարգով ապահովելով դրա ընթացքը:

3. «ՍԵՅՖ» (Simple Agreement for Future Equity - SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծման վերաբերյալ

(Հովսեփ Պատվականյան, Կարեն Զաքարյան, Ռաֆայել Գևորգյան, Տիգրան Խաչատրյան)

1) Ընդունել ի գիտություն «Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Կարեն Զաքարյանի և ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանի զեկույցը՝ «ՍԵՅՖ» պայմանագրերն իրավակարգավորող դաշտի ստեղծման նպատակով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:
2) ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ երկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ Պետական եկամուտների կոմիտեի հետ ևս մեկ անգամ շրջանառել ««Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

4. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցման վերաբերյալ

(Հովսեփ Պատվականյան, Դավիթ Աղաջանյան, Հայկազ Ֆանյան, Ռաֆայել Գևորգյան, Տիգրան Խաչատրյան)

1) Ընդունել ի գիտություն «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Հայկազ Ֆանյանի և ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի զեկույցը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցման վերաբերյալ՝ հնարավորություն տալով ընկերություններին թույլատրել իրենց կանոնադրությամբ սահմանված հաճախականությամբ, բայց ոչ հաճախ քան եռամսյակը մեկ անգամ, իրականացնել շահույթի բաշխում ընկերության մասնակիցների միջև:
2) ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել Կառավարության քննարկմանը:

5. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հետագա աշխատանքների վերաբերյալ

(Հովսեփ Պատվականյան, Կարեն Զաքարյան, Ռաֆայել Գևորգյան, Տիգրան Խաչատրյան)

1) Ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի դիրքորոշումը՝ գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայման հարցը ենթախորհրդի առաջիկա նիստի օրակարգում ընդգրկելու անհրաժեշտության վերաբերյալ:
2) Ընդունել ի գիտություն «Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Կարեն Զաքարյանի առաջարկը

բոլոր իրավաբանական անձանց համար միասնական օրենք կամ օրենսգիրք մշակելու վերաբերյալ:

3) Առաջարկել ՎՔԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանին դիտարկել վերոնշյալ ուղղություններով աշխատանքներ իրականացնելու և Կառավարության քննարկմանը համապատասխան առաջարկություններ ներկայացնելու հնարավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ